ԱԳՈՐԱ Լրատու

ՓԵՏՐՎԱՐ 5 - 16 2016 Թ. ԹԻՎ 2 (2090) ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Արտադրության կազմակերպում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է իրանական «Միրաբ» ընկերության պատվիրակությանը, որը գլխավորում էր ընկերության հիմնադիր տնօրեն Մորթեզա Թավաջոհը:

Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանը:

Հանդիպման սկզբում հյուրերը համառոտ ներկայացրել են ընկերության գործունեությունը, որի հիմնական ուղղվածությունը տարբեր տրամաչափերի փականների արտադրությունն է, որոնք օգտագործվում են նաև գյուղատնտեսության բնագավառում: Պարոն Թավաջոհը տեղեկացրել է, որ գործունեության 35 տարվա ընթացքում «Միրաբ» ընկերությունն ունեցել է զգալի հաջողություններ, Գերմանիայում գործում է մասնաճյուղ, աշխարհի 14 երկրներում ունեն ներկայացուցչություններ և ներկայումս իրենց արտադրանքը մեծ պահանջարկ է վայելում: Ընդգծելով, որ ընկերության նախորդ տարվա արտադրանքի մեծ մասն ուղղվել է Իրանի գյուղատնտեսության ոլորտում ոռոգման համակարգերի բարելավմանը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում քայլեր են ձեռնարկվում ոռոգման կաթիլային համակարգին անցնելու ուղղությամբ՝ պարոն Թավաջոհը վստահություն է հայտնել, որ իրենց արտադրանքը կարող է հետաքրքրել նաև հայկական շուկային: Այս կապակցությամբ նա ցանկություն է հայտնել Հայաստանում ևս կազմակերպել փականների արտադրություն: «Նման արտադրության կազմակերպումը մեր երկրում շատ կարևոր է, իսկ նկատի ունենալով Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը, կարծում եմ, որ մեր երկիրը կարող է հարմար հարթակ հանդիսանալ ընկերության արտադրանքը դեպի ԵՏՄ շուկա արտահանելու համար», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Տեղեկացնելով, որ վերջին տարիներին Հայաստանում բարենպաստ պայմաններ են ստեղծվել արտասահմանյան ներդրումների և երկրում նոր բիզնես սկսելու համար՝ նախարարը պատրաստակամություն է հայտնել աջակցություն ցուցաբերել իրանական կողմին ՀՀ-ում փականների արտադրության կազմակերպման գործում:

Հանդիպման ավարտին նախարարն առաջարկել է հյուրերին հանգամանորեն ուսումնասիրել հայկական շուկան և ոռոգման համակարգում առկա խնդիրները՝ հետագայում արտադրությունն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Կաթնատու անասնապահության զարգացման ռազմավարություն

Գյուղատնտեության նախարար Սերգո Կարապետյանն այսօր ընդունել է շվեդական հայտնի «ԴեԼավալ» ընկերության Անդրկովկասի և Մոլդովայի տարածքային տնօրեն Օլեգ Պավլովի գլխավորած պատվիրակությանը՝ Հայաստանում կաթնատու անասնապահության զարգացման հնգամյա ռազմավարության մշակման հարցը քննարկելու նպատակով: Հանդիպմանը ներկա էր նաև «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարդարյանը:

«ԴեԼավալ» ընկերությունը համաշխարհային շուկայում կաթի արտադրության տեխնոլոգիական լուծումներ առաջարկող առաջատար կազմակերպություն է և տարածաշրջանում ունի նմանատիպ ռազմավարությունների մշակման հարուստ փորձ:

«Անասնապահությունը մեր երկրի գյուղատնտեսության ոլորտի գերակա ուղղություններից մեկն է: Այս ոլորտում առանձնապես կարևոր է գյուղատնտեսական կենդանիների կաթնատվության բարձրացումը, և ես համոզված եմ, որ մշակվող ռազմավարությունը էապես կնպաստի կաթի արտադրության ծավալների ավելացմանը», - ողջունելով հյուրերին՝ նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

☞ 2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ոռոգման ոլորտի կազմակերպությունների գործունեության և կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև «Արփա-Սևան» N2 թունելում նոր ի հայտ եկած առանձին վթարային հատվածների հիմնանորոգման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացման և ֆինանսավորման նպատակով, կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում:

Անդրադառնալով որոշմանը՝ վարչապետն ընդգծել է, որ «Արփա-Սևան» թունելի հետ կապված, կա լուրջ անելիք, ինչը հնարավորություն կտա Սևանա լիճ տեղափոխել ավելի շատ քանակությամբ ջուր: Կառավարության ղեկավարը նշել է, որ այդ հարցը քննարկվել է ՀՀ Նախագահի հետ, և հանձնարարել է պատասխանատուներին հնարավորինս արագ իրականացնել վերանորոգման աշխատանքները:

* * *

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է ֆրանսիական «Վեոլիա» ընկերության Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի փոխնախագահ Մալիկա Գենդուրիին:

Զրուցակիցները քննարկել են ՀՀ-ում «Վեոլիա»-ի հիմնադրած «Երևան Ջուր» ջրամատակարար կազմակերպության գործունեությանը, մասնավորապես, Երևանի և շրջակա մի շարք գյուղերի ջրամատակարարման ու ջրահեռացման աշխատանքներին առնչվող հարցեր:

Վարչապետ Աբրահամյանն արդյունավետ է գնահատել «Վեոլիա»-ի գործունեությունը և կարևորել նման խոշոր ընկերության ներկայացվածությունը մեր երկրում: Իր հերթին, Մալիկա Գենդուրին շնորհակալություն է հայտնել Հայաստանի կառավարությանը՝ սերտ փոխգործակցության համար և ներկայացրել մանրամասներ «Վեոլիա»-ի առաջիկա ծրագրերի վերաբերյալ: Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձել են նաև հետագա համագործակցության վերաբերող հարցերի:

* * *

Գործադիրը հավանություն է տվել Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2016թ. միջոցառումների ծրագրին: Կառավարության 2015թ. գործունեության միջոցառումների ծրագրով ընդգծվել է գործարար միջավայրի բարելավման անհրաժեշտությունը, որի համար պետք է իրականացնել արագ բարեփոխումներ:

Իրականացվող բարեփոխումները պետք է զգալիորեն բարձրացնեն Հայաստանի գլոբալ մրցունակությունը և արդյունքում բարելավեն Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման մեջ:

Ծրագրով նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնք կնպաստեն բիզնես սկսելու և զարգացնելու համար պահանջվող վարչարարական ընթացակարգերի պարզեցմանը, ՓՄՁ-ների աճին, արտաքին առևտրի խթանմանը, հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականության իրականացմանը և այլն:

* * *

Փետրվարի 15-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունից, ընդհանուր առմամբ, արտահանվել է 7575 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4139 տոննայի դիմաց: Այդ թվում արտահանվել է 2429 տոննա պտուղ և խաղող՝ նախորդ տարվա նույն ժամանակահատված 2090 տոննայի դիմաց և 5146 տոննա բանջարեղեն և կարտոֆիլ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2049 տոննայի դիմաց:

Վստահության, հավատի ու նվիրվածության արդյունքում էջ 4

Մասնագետի խորհուրդը էջ 6

Սերմերի ծլունակության որոշման լաբորատոր նոր եղանակ էջ 7

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Կաթնատու անասնապահության զարգացման ռազմավարություն

1

Ռազմավարությունը նպատակ ունի մի շարք առանցքային բարելավումներ արձանագրել, մասնավորապես՝ կրկնապատկել կովերի կաթնատվությունը և նպաստել կաթի որակական հատկանիշների բարելավմանը: Ռազմավարության մշակման ընթացքում կուսումնասիրվեն ոլորտում առկա իրավիճակը, ենթակառուցվածքները, և վեր կհանվեն զարգացմանը էապես խոչընդոտող կամ խթանող գործոնները:

Հնգամյա ռազմավարության մշակումը նախատեսվում է իրականացնել ՔԱՐԴ «Ագրո Սերվիս» ՓԲԸ-ի հետ համատեղ, մինչև 2016 թվականի ապրիլ-մայիս ամիսները:

Պատվիրակության անդամ, ընկերության գլխամասի Գլոբալ ծրագրերի նախագծման բաժնի կաթի փորձագետ Ստեֆան Բերգստանդն իր հերթին տեղեկացրել է, որ ընկերության աջակցությամբ մշակված զարգացման ռազմավարություններն ու ծրագրերն այսօր հաջողությամբ կիրառվում են մի շարք երկրներում:

Ընդգծելով, որ ռազմավարության մշակման և հետագայում հաջող իրականացման համար անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանի անասնապահության ոլորտի ողջ առանձնահատկություններն ու ոլորտում առկա խնդիրները՝ Սերգո Կարապետյանը միաժամանակ պատրաստակամություն է հայտնել առավելագույնս աջակցել ռազմավարության մշակմանը:

ՄԱՐԶԱՅԻՆ

Կոտայքի ԳԱՄԿ-ի 2016 թ. գործունեության կարևոր միջոցառումները

ՀՀ կառավարությունը կարևորում է գյուղատնտեսության պետական աջակցությունը: Գյուղատնտեսությունը համարվում է Հայաստանի տնտեսության առանցքային ոլորտ՝ հաշվի առնելով արտահանումից ստացվող եկամուտների ընդլայնվող հնարավորությունները, ինչպես նաև ոլորտի առանցքային դերը երկրի պարենային ապահովության գործում: Գյուղատնտեսությունը, արտադրողականության բարձրացման, առաջավոր փորձի և գիտելիքի կիրառման միջոցով, կարևոր դեր է խաղում գյուղական վայրերում բնակչության կենսական պայմանների բարելավման գործում:

Կոտայքի մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական նպատակը՝ մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտները, որն էլ իր հերթին կնպաստի աղքատության նվազեցմանը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար, Կոտայքի ԳԱՄԿ-ը 2016 թ. իր գործունեության ծրագրի մեջ ներառել է հետևյալ փոխկապակցված ուղղությունները՝ գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություն, ագրոմարկետինգային գործունեություն, ագրարային ոլորտի տեղեկատվության տարածում, գիտական նորությունների ներդրում և սեզոնային զբաղվածության ապահովում՝ նոր ծրագրի միջոցով: Այս ուղղությամբ, ինչպես ամեն տարի, 2016 թ. ևս ԳԱՄԿ-ը ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը՝ կազմակերպել սեմինարներ, դաշտային օրեր, փորձացուցադրական աշխատանքներ: Սեմինարների կազմակերպման ընթացքում հաշվի են առնվելու տվյալ համայնքի գյուղացիական տնտեսություն վարողների թիվը, գյուղատնտեսության վարման ուղղությունները, առաջնահերթ կարիքների բացահայտման սեմինարների արդյունքները, համայնքային հիմնախնդիրները, ինչպես նաև գյուղացիների կողմից բարձրացված հարցերը: Բացի սեմինարներից, իրականացվելու են նաև դաշտային օրեր և փորձացուցադրական աշխատանքներ՝ հաջողված մեթոդների և նորարարությունների հիման վրա: Փորձը ցույց է տալիս, որ դաշտային պայմաններում անցկացված դաշտային օրերը կամ խորհրդատվական միջոցառումները, որոնք ուղեկցվում են գործնական ցուցադրումներով, ֆերմերների կողմից առավել ողջունելի են ու արդյունավետ:

2016 թ. Կոտայքի ԳԱՄԿ-ի կարևոր գործառույթներից է լինելու նաև ագրարային ոլորտի տեղեկատվության տարածումը, որը կատարվելու է խորհրդատվական և լրատվական թերթիկների, ԳԱՄԿ-ի ֆեյսբուքյան էջի, կայքի, «Խորհուրդ Ագարակատիրոջը» խորհրդատվական տեղեկագրերի միջոցով: Վերջինիս էջերում բարձրացվելու են մարզային կտրվածքով կարևորագույն հիմնախնդիրները, ԳԱՄԿ-ի մասնագետների խորհրդատվական նյութերի շնորհիվ մասնագիտական բացատրություններ են տրվելու ԳՏ վարողներին անհանգստացնող առաջնահերթ հարցերին: Հեռուստաընկերությունների միջոցով թողարկվելու են մարզային անցուդարձի, գյուղատնտեսական նորարարությունների, եղանակային փոփոխությունների վերաբերյալ հեռուստահաղորդումներ:

Նարինե Անդրեասյան

Նարեկում խնդիրները լուծում են ստանում

Վերջերս Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանն աշխատանքային այցով Նարեկ համայնքում էր: Մարզպետին ուղեկցել են մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության, ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետերը:

Աշխատանքային այցի սկզբում Արարատի մարզպետը հանդիպել է Նարեկ համայնքի բնակիչների հետ: Նարեկցիները, ծավալված անմիջական զրույցի ընթացքում, մարզպետին են ներկայացրել իրենց հուզող հարցերը, դիմել համայնքի գյուղատնտեսական, կրթական ու այլ խնդիրների հետ կապված հարցերով, ինչպես նաև շնորհակալություն հայտնել մարզի ղեկավարին՝ նախորդ տարվա ընթացքում համայնքում կատարված աշխատանքների ու դրական տեղաշարժերի համար:

2015թ. գարնանը տեղացած կարկտի վնասներից տուժած Նարեկ համայնքում արդեն իսկ տեղակայվել է երկու հակակարկտային կայան, 2 մլն սունվենցիա է հատկացվել համայնքի «Արևիկ» մանկապարտեզին, որի շնորհիվ ձեռք է բերվել գույք, առաջիկա պլանային աշխատանքների մեջ է դպրոցի վերանորոգման ու դպրոց տանող գլխավոր ճանապարհի հարցը, որի համար և Ռուբիկ Աբրահամյանն այնուհետև այցելել է Նարեկ համայնքի միջնակարգ դպրոց: Մարզի ղեկավարն անձամբ է ծանոթացել է շենքային պայմաններին, եղել դպրոցի բոլոր մասնահատվածներում, զրուցել ինչպես աշակերտների, այնպես էլ՝ ուսուցչական կոլեկտիվի հետ:

«Կարևորելով կրթության և մասնավորապես, դպրոցի դերը առողջ ու խելացի սերունդ ունենալու գործում՝ ես հորդորում եմ ամենայն պատասխանատվությամբ մոտենալ ձեզ վստահված պատասխանատու գործին ու դպրոց մտնել ամենայն սիրով»,- ասել է Ռուբիկ Աբրահամյանը ուսուցչական կոլեկտիվի հետ զրույցի ժամանակ:

Նարեկի միջնակարգ դպրոցի տնօրենը, զեկուցելով սուր շնչառական հիվանդությունների հետ կապված իրավիճակի մասին, ասել է, որ իրավիճակը վերահսկելի է և որ աշակերտների հաճախելիության հետ կապված խնդիրներ չկան:

Այցի ընթացքում շրջելով դպրոցում՝ Ռուբիկ Աբրահամյանը մարզպետարանի համապատասխան կառուցվածքների ղեկավարներին հանձնարարել է առաջիկա ծրագրային աշխատանքների մեջ ներառել կենսական համարվող դպրոցի տանիքի, սանհանգույցների ու սպորտդահլիճի վերանորոգման հարցը և համապատասխան ժամանակահատվածում այն հասցնել ավարտին:

ԱԳՐՈ Լրատու
Փետրվար 5 - 16, 2016 թ.
թիվ 2 (2090)

ՍԵՄԻՆԱՐ

ԿԼԻՄԱՅԱԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԸ

2016 թ. փետրվարի 2-ին և 4-ին «Կանաչ արահետ» ՀԿ-ն և Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցը (CENN) կազմակերպել էին «Կլիմայակայուն գյուղատնտեսության մոտեցման և գործելակերպերի» վերաբերյալ թեմայով սեմինար՝ «Նպաստելով կլիմայի համար անվնաս խելացի գյուղատնտեսության կիրառմանը Վրաստանում և Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Եվրամիության կողմից ֆինանսավորվող Կլիմա Արևելք՝ Աջակցություն կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ծրագրին ՌԴ-ում և Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի արևելյան երկրներին ծրագրի փորձագիտական աջակցության ծառայության շրջանակներում: Սեմինարը վարում էր Հոլանդիայից ժամանած փորձագետը՝ Ջելմեր Բուիյսը:

Սեմինարի ընթացքում ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները՝ կլիմայի փոփոխության ընդհանուր գաղափարը, կլիմայի փոփոխությունը Հայաստանում, կլիմայի փոփոխության հիմնական ռիսկերը՝ կապված Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի հետ, կլիմայի փոփոխության պոտենցիալ առավելությունները, կարևոր մշակաբույսերի հետ կապված և հեռանկարները, լավագույն գործելակերպերը ֆերմերային տնտեսության մակարդակում, լավագույն միջոցառումները տարածաշրջանային կամ քաղաքականության մակարդակում:

Փորձագետը նաև ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների Կայուն Զարգացման Ռազմավարության իր վերլուծությունը, ինչպես նաև կլիմայակայուն գյուղատնտեսության գործողությունների պլանավորումը:

Սեմինարին մասնակցում էին ՀՀ պետական մարմինների, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից, ՀԱԱՀ, ՄԱԶԾ, ՄԱԶԾ ENPARD ծրագրի, Ավստրիական զարգացման գործակալությունից, «Ագրոբիզնեսի և Գյուղի Զարգացման Կենտրոն Հիմնադրամ»-ից, Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնից, ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրի, «Էկոգլոբ» ՍՊԸ-ից, ԳԱՄԿ-երից, «Վորլդ Վիժն Հայաստան»-ից, «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամից և այլն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Սյունիք Զարգացում» ՀԿ-ն հիմնադրվել է 1995թ.-ին: Իր գործունեության 20 տարիների ընթացքում այն հասցրել է դառնալ ամենաակտիվ հասարակական կազմակերպություններից մեկը Հայաստանում և համագործակցել տեղական ու միջազգային բազմաթիվ կազմակերպությունների հետ: Ներկայումս կազմակերպությունն ունի կանոնակարգված գործունեություն հետևյալ բնագավառներում՝ Համայնքային Զարգացում, Գյուղատնտեսություն, Երիտասարդական ծրագրեր, Կրթական, Հանրային Կապեր և Շուկայավարություն, Տուրիզմի Զարգացում:

Ինչպես նշեց ՀԿ-ի Համայնքային և երիտասարդական ծրագրերի ղեկավար Նաիրա Հարությունյանը, զարգացման ծրագրերի շրջանակում, 2006 թ. սկսած, ՀԿ-ն համագործակցում է շվեյցարական HEKS/EPER կազմակերպության հետ, որոնց աջակցությամբ մարզի 7 համայնքներում սկսել են ոռոգման ջրագծերի անցկացման ծրագրեր: 2011 թ. նույն շահառու 7 գյուղերն ընտրվել են որպես համայնքային զարգացման ծրագրի շահառուներ, որտեղ այգեգործությունը համարվում է որպես հեռանկարային ոլորտ, քանի որ բնակլիմայական պայմանները թույլ են տալիս այս ուղղությունը զարգացնելու համար: Ծրագիրը բաղկացած է մի քանի բաղադրիչներից: Առաջինը՝ տնկարանի կոմպոնենտն է. խորհրդային կարգերի փլուզումից հետո մարզում տնկարանային տնտեսությունները դադարել են որևէ գործունեություն ծավալել: Մարզում այդ գործով զբաղվել ցանկացողները տնկարաններ ձեռք էին բերում այլ մարզերից՝ Արարատ, Արագածոտն, Արմավիր՝ նպատակ ունենալով, որ 5 տարի հետո կստանան ցանկալի արդյունք (պատրաստի տնկիներ և ծառեր): Այս ծրագրին օգնության ձեռք են մեկնել Գետափ համայնքի 5 ֆերմերներ (խմբի անդամներից 2-ը կանայք են), ովքեր ցանկություն են հայտնել հիմնելու տնկարանային տնտեսություններ և մարզի ֆերմերներին առաջարկել որակյալ տնկիներ:

Հաջորդը տեխնիկայի պարկի նախաձեռնությունն է: Մարզում առկա գյուղատնտեսական տեխնիկան բավականին հին էր. քննարկվել է այն նորով փոխարինելու հարցը: Դարձյալ խմբի 5 անդամներ են ընտրվել, որոնց համար ծրագրի միջոցներով հատկացվել են տրակտորներ՝ իրենց կցորդիչներով: Տեխնիկայի պարկի անդամներն այժմ ծառայություն են մատուցում աշխատանքի կարիք ունեցող ֆերմերներին:

Ծրագրի հաջորդ բաղադրիչը, ըստ Ն. Հարությունյանի, շուկայի հասանելիության կոմպոնենտն է, ՀԿ-ն փորձում է հանդիպումներ իրականացնել շուկայի հիմնական կազմակերպիչների հետ, գնորդներ ձեռք բերել, ֆերմերների և նրանց միջև կապ ստեղծել, ի վերջո նրանց միջև միջնորդ հանդիսանալ: ՀԿ-ն համագործակցում է նաև մարզում գործող միակ դեղանյութեր և բուժանյութեր վաճառող փոքր կենտրոնի հետ, փորձում են զարգացնել վերջինիս կարողությունները, որ կարողանա մարզի ֆերմերներին համապատասխան խորհրդատվություն մատուցել օրգանական պարարտանյութերի, բուժանյութերի ճիշտ կիրառման վերաբերյալ:

Հաջորդ կարևոր բաղադրիչը կարողությունների զարգացման կոմպոնենտն է. այսինքն՝ ֆերմերների համար տեսական և գործնական սեմինարների, աշխատանքային հանդիպումների, քննարկումների, ֆիլմերի դիտումների կազմակերպելն է: Յուրաքանչյուր շահառու համայնքներից ընտրվել են առաջավոր ֆերմերներ, ովքեր ունեն նոր հիմնած երիտասարդ այգի, այդ այգում ՀԿ-ի մասնագետները տրամադրում են խորհուրդներ թե տնկման տեխնոլոգիայի, թե բուժանյութերի ճիշտ կիրառության վերաբերյալ, էտի կազմակերպման, ոռոգման ճիշտ ժամանակացույցի առավելությունները:

Ծրագրի շրջանակում ՀԿ-ն համագործակցում է նիդեռլանդական PUM կազմակերպության հետ, որը զբաղվում է ծրագրի աշխատակազմի կարողությունների զարգացմամբ՝ ներկայացնելով և կիրառելով եվրոպական փորձը: Նրանց օժանդակությամբ ձեռք ենք բերել ինտենսիվ պատվաստակալներ ու տնկիներ և մարզում հիմնել առաջին փորձացուցադրական ցածրաճ այգին, իսկ այգուն կից հիմնել են նաև տնկարան և ցանկության դեպքում կարող են ձեռք բերել տնկիներ:

«Սյունիք» ՀԿ-ն սերտորեն համագործակցում է «ՇԵՆ» ՀԿ-ի հետ, համատեղ ծրագրեր են իրականացնում Գեղարքունիքի մարզում: Երկու մարզի ֆերմերները բիզնես հարաբերություններում համագործակցում են, «Շեն»-ի հետ համատեղ, տարբեր քննարկումներ, սեմինարներ են կազմակերպում ինչպես մարզում, այնպես էլ Վարդենիսի տարածաշրջանում: Ֆինանսավորումն իրականացվում է HEKS/EPER կազմակերպության կողմից, համագործակցում են նաև գերմանական մի շարք ՀԿ-ների հետ, որոնց օժանդակությամբ իրականացնում են սոցիալական զարգացման ծրագրեր, ծրագրի շրջանակներում հիմնել են կրթական կենտրոններ (դպրոցահասակների և փոքրերի համար), արհեստագործական խմբակներ՝ կանանց համար, ինչպես նաև ժամանցային խմբակներ: Համագործակցությունն իրականացվում է նաև դեսպանատների հետ:

Ն. Հարությունյանի խոսքով՝ «Սյունիք-Զարգացում» ՀԿ-ն Վայոց ձորի մեղվաբուծությամբ հետաքրքրված բնակիչների համար կազմակերպել է նաև մեղվաբուծության անվճար խմբակ: Խմբակի նպատակն է՝ մասնակիցներին գիտելիք հաղորդել մեղվաբուծության ինչպես ավանդական, այնպես էլ նոր տեխնոլոգիաների, մեղվաընտանիքների բազմացման և արտադրանքի որակի բարձրացման, մեղրի արտադրության առանձին փուլերի՝ մեղրաբերքի, մեղրամոմի մթերման ու վերամշակման, ինչպես նաև մեղուների հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման վերաբերյալ: Կկազմակերպվեն տեսական և գործնական դասընթացներ, ֆիլմերի դիտումներ և քննարկումներ, փորձի փոխանակման այցեր ինչպես տեղի հաջողակ մեղվապահների, այնպես էլ՝ Վրաստանի մեղվապահների հետ:

Նախորդ տարվա հոկտեմբերին «Սյունիք-Զարգացում» հասարակական կազմակերպությունը հյուրընկալել էր մոլդովացի մի քանի խաղողագործների, այգեգործների և հատապտուղների մշակությամբ զբաղվող ֆերմերների: Նպատակը՝ Սյունիք ՀԿ-ի կողմից այս

ոլորտում իրականացվող ծրագրերին ծանոթանալն էր, ինչպես նաև տեղի ֆերմերներին այցելելն ու փորձի փոխանակումն էր:

Գյուղատնտեսական ծրագրի շրջանակներում, ՀԿ-ն հյուրընկալել է նաև շվեցարական HEKS/EPER կազմակերպության ներկայացուցիչներին: Այցի նպատակը՝ մոնիտորինգի իրականացումն է շահառու համայնքներում, հանդիպում ֆերմերների հետ, տեղում ծանոթանալը նրանց տնտեսությունների հետ: Հանդիպումներ են տեղի ունեցել Ռինդ, Արփի, Աղավնաձոր և Գետափ համայնքների ֆերմերների հետ, քննարկվել են մթերումների ընթացքն ու ձեռքբերումները: Հյուրերն այցելել են նաև Սյունիք ՀԿ-ի փորձացուցադրական այգի և ծանոթացել իրականացված աշխատանքներին:

Լիանա Շախնազարյան

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՏԻ ՈՒ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Տավուշի մարզի 605 բնակիչ ունեցող Ներքին Ծաղկավան գյուղի բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է: 2012թ.-ին ձևավորվեց «Ներքին Ծաղկավան համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը, որը, կոոպերատիվի անդամների վկայությամբ, էապես փոխեց գյուղացու կյանքը: Նախկինում նրանց մտահոգող շատ խնդիրներ վաղուց արդեն մոռացվել են:

Գուրամ Գասպարյանն աշխատում է գյուղապետարանում, ունի գյուղացիական փոքր տնտեսություն: Անդամակցելով կոոպերատիվին՝ նախատեսել է հզորացնել այն, քանի որ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները: «Կոոպերատիվը դրական շատ փոփոխություններ բերեց գյուղ: 90-ական թվականներից հետո գյուղատնտեսական տեխնիկան չէր նորացվել, ինչի հետևանքով տուժում էին բերքահավաքի աշխատանքները: Տեխնիկան վարձակալությամբ բերում էինք հարևան մարզերից: Այդ պատճառով բերքահավաքի աշխատանքները կատարում էինք ժամկետից ուշ, ինչի հետևանքով բերքի կորուստները մեծ էին լինում: Կոոպերատիվի շնորհիվ, տեխնիկայով ապահովվածության հարցը լուծվել է, որի արդյունքում, թե հողի մշակության, և թե ցանքի հետ կապված շատ խնդիրներ արդեն որոշակի լուծում են գտել: Նախկին թերահավատությունն արդեն չկա: Այժմ մարզի լավագույն և կայացած կոոպերատիվներից մեկը մերն է»,- վստահաբար ասում է Գուրամ Գասպարյանը:

«Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, իրականացվել է «Արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» ծրագիրը, որի շրջանակներում մեկ խմոց տեղադրվել է գյուղում, չորսը՝ հեռագնա 600 հա արոտավայրերում: «Այն ամենաարդյունավետ և օգտակար ծրագրերից մեկն է, որն իրականացվում է գյուղում: Ծրագրի միջոցներով ձեռք բերված գյուղատնտեսական համապատասխան սարքավորումներով տեխնիկայի շնորհիվ, ժամանակին են կատարվում անասնակերի կուտակման աշխատանքները, բացի այդ, բարելավվել է կերի որակը: Բարեկարգվել են նաև արոտավայրեր տանող ճանապարհները», - նշում է գյուղապետ Նաիրի Աթաբեկյանը:

Կենդանիների կաթնատվության և մթերատվության բարձրացման արդյունքում՝ գյուղացին ավելացնում է անասնագլխաքանակը: Խոշոր եղջերավոր կենդանիների թիվը նախկին 290-ից հասել է 320-ի: «Գյուղացին շահագրգռված է ավելացվել անասնագլխաքանակը, սակայն պետական աջակցությամբ պետք է լուծվի կաթի և մսի իրացման խնդիրը, բացվեն մթերման կետեր»,- իր մտահոգությունն է կիսում կոոպերատիվի նախագահ Գևորգ Գասպարյանը: Նրա տեղեկացմամբ, ձեռք բերված տեխնիկայի շնորհիվ, 20-30 %-ով իջել են ծառայությունների գները: Արդյունքում՝ աշնանացանը նախկին 5 հա-ից հասել է 50-ի, իսկ առաջիկայում, գյուղին կոմբայն տրամադրելու դեպքում, այն կավելանա ևս 100 հա-ով:

Կոոպերատիվն իր խնամքի տակ ունի 300 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, որից միայն 100-ը՝ կոոպերատիվի նախագահինն է: Գևորգ Գալստյանը փորձում է օրինակ ծառայել ուրիշներին՝ շարունակաբար ավելացնելով անասնագլխաքանակը: Եվ այդ ամենը՝ վստահության, հավատի ու նվիրվածության արդյունքում:

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ԿԱՆԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՌԱՎԵԼ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՆԱՆ

Գյուղի կնոջ հոգսերը, կյանքի և կենցաղային պայմանները, աշխատանքի ապահովվածության հարցը, նրանց ծրագրերի և մտահաղացումների իրականացման խնդիրները միշտ էլ եղել են «Գյուղի կին» հասարակական կազմակերպության նախագահ Վերա Գրիգորյանի մտահոգության հիմնական ուղղությունները: Կին գործարարի Արագածոտնի մարզի Օշական գյուղում հիմնադրած սկզբում՝ «Թամար տատիկ», այժմ էլ՝ «Գյուղի տատիկ» ՍՊԸ-ը, իրեն շուրջը համախմբելով գյուղաբնակ կանանց, փորձում է փոքր-ինչ թեթևացնել նրանց հոգսերը, աջակցել խնդիրների լուծմանը:

Վերա Գրիգորյանը «Գյուղի կին» հասարակական կազմակերպության նախագահն է՝ սկսած 2002 թ.-ից: Միաժամանակ անդամակցում է նաև Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիային: Արժանացել է «Գյուղատնտեսության ոլորտի կին հերոսի» կոչմանը: Գործի բերումով հաճախ է այցելում ոչ միայն Արագածոտնի, այլև այլ մարզերի համայնքներ, ծանոթանում գյուղի կանանց հոգսերին ու խնդիրներին, փորձում աջակցել նրանց: «Համայնքներում ապրող կանանց խնդիրներն ամենուրեք գրեթե նույնն են: Նրանց հոգսերը պետք է թեթևացնել: Իսկ դրա համար համընդհանուր ծրագրեր պետք է իրականացնել, նրանց համար գործարարություն ծավալելու հնարավորություն ընդձեռել: Պետք է ոգևորել կանանց»,- ասում է տիկին Վերան: Համայնքներում ակտիվ կանայք կարողանում են միանալ ոչ ֆորմալ խմբերին և նույնիսկ մասնակից լինել աջակցության ծրագրերին: Այդպես եղավ նաև Օշականում: Երեք տարի առաջ, կանանց նախաձեռնությամբ, ստեղծվեց Օշականի սպառողական կոոպերատիվը, որը «Գյուղի կին» ՍՊԸ-ին է մատակարարում իր արտադրած միրգը, հատապտուղները և բանջարեղենը, որտեղ դրանք վերամշակվում են: Ընկերությունը մասնագիտացել է չրերի և հայկական ավանդական քաղցրավենիքների արտադրությունում: Այգետարածքներում հիմնականում արտադրում են ծիրան, սալոր, խաղող, ընկույզ և այլն: Նախատեսում են ՌԴ առաքել ոչ միայն վերամշակված և սառեցված, այլև՝ թարմ հատապտուղներ ու մրգեր, որոնց պահանջարկը նույնպես մեծ է ռուսական շուկայում: Ի դեպ, «Օշական սպառողական կոոպերատիվն» ամբողջությամբ անցել է ոռոգման կաթիլային համակարգին: Քայլեր են արվում նաև

օրգանիկ գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ: Այդ նպատակով որոշ հողատարածքներ տրամադրվել են օրգանիկ հատապտուղների արտադրությանը: Հիմնել են նաև պտղատու նոր այգիներ: «Բոլոր գործերը հասցնում եմ քիչ քնելով և վաղ արթնանալով: Դժվար է, սակայն քեզ հանգիստ ես զգում, երբ կարողանում ես օգնել մարդկանց»,- ասում է Վերա Գրիգորյանը: Ի դեպ, կին գործարարը իր խնամքի տակ է վերցրել Գավառի մանկատնից 18 տարին լրացած մի աղջկա և Արագածոտնի մարզի Հնաբերդ գյուղի սոցիալապես անապահով մի ընտանիքի դպրոցահասակ տղայի: Տիկին Վերան հոգում է նրանց ապրելակերպի, կրթության ապահովագրման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման հարցերը: Գործարար ծրագրերի իրականացման գործընթացում Վերա Գրիգորյանը կարևորում է ֆինանսական ռեսուրսների առկայությունն ու ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրումը:

Նյութերը՝ Նելլի Սահակյանի

ՊԳԿ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Վերջերս կազմակերպության համանուն զեկույցում հրապարակած նշվում է, որ 2007-2011 թվականների գնային կտրուկ փոփոխություններից հետո, հատկապես հացահատիկի և բուսական յուղերի հետ կապված, մտնում ենք մի փուլ, որը բնութագրվում է կայունությամբ և ցածր գներով:

Դրա պատճառները՝ բացի դոլարի կայունացումն ու նավթի գների անկումը, պարենի պահուստների մակարդակի բարձրացումն է և այդ 3-ից որևէ մեկը մոտ ժամանակներում դուրս չի գալու կայունության տիրույթից: Միակ գործոնը, որ կկարողանա անդրադառնալ կայացած կայունության վրա, անբարենպաստ եղանակային պայմաններն են:

ՊԳԿ պարենային գների ինդեքսը, որ հաշվարկվում է 5 ապրանքային խմբերի գների միջին արժեքով, նախորդ տարվա օգոստոսին հասավ իր 6-ամյա մինիմումին: Այդ ապրանքներից ամենակայունը բրնձի գներն են, որի վրա որևէ կերպ չեն ազդում հացահատիկի գները, իսկ ամենաանկայունը շաքարինն է, որը 1990 թվականից սկսած, 12 անգամ հասցրել է կորցնել և վերադարձնել

իր գնի կեսից ավելին: Մսի և կաթի գները, որպես շուտ փչացող ապրանքների, ենթակա են ընդհանուր տենդենցների ազդեցությանը, որը, սակայն, որոշ ուշացումներով է դրսևորվում:

Հացահատիկային մշակաբույսերի գները՝ մի քանի տարի անընդմեջ բարձր բերքերի հետևանքով և կուտակվող պահուստների պատճառով, շարունակում են անկում ապրել: Արտադրության կանխատեսումը ենթադրում է նվազում մինչև 2534 միլիարդ տոննա, որի հիմնական պատճառը, հավանաբար, ԱՄՆ-ում եգիպտացորենի արտադրության նվազումն է, ինչպես նաև 2012 թվականի հուլիսից մինչև օրս գների կրկնակի անկումը:

Անշուշտ, պարենի գների անկումը դրական գործոն է պարենային անվտանգության համար և արդարացի այն ընտանիքների համար, որոնք իրենց բյուջեի մեծ մասը ծախսում են մթերք ձեռք բերելու համար: Սակայն միևնույն ժամանակ պետք է հիշել, որ կանխատեսումներով տարին փակվելու է աշխարհի կտրվածքով ներկրված մթերքի 1,09 տրիլիոն ԱՄՆ դոլար ցուցանիշով, որը նվազագույնն է վերջին 5 տարվա կտրվածքով:

Նման իրավիճակում, որպեսզի ֆերմերների եկամուտը գնալով ավելի չնվազի, անհրաժեշտ է խթանել գյուղատնտեսության մեջ ներդրումները՝ և հատկապես գյուղատնտեսական ծառայությունների մասով՝ վարկերի, ճանապարհների, սառնարանային և պահեստային հզորությունների զարգացման առումով:

Վ Հ

ԱԳՐՈ Լրատու
Փետրվար 5 - 16, 2016 թ.
Թիվ 2 (2090)

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՍԱՀՈՒՄՈՒՍԻ ՋՐԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Բույսերին թույլատրելի քանակությամբ անհրաժեշտ սննդանյութերով ապահովելու համար, կենսահումուսի հիմքի վրա ստացվել է կոնցենտրիկ «Բիովան» անվամբ ջրային պատրաստուկը: Այն օրգանական, էկոլոգիապես մաքուր, բիոլոգիապես բարձր արդյունավետությամբ պարարտանյութ է, որն իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ միկրոտարրեր, ինչպես նաև բարձրորակ կենսահումուսին բնորոշ բոլոր բաղադրամասերը՝ ֆուլվոթթուներ (ջրում լուծվող էլեկտրոլիդներ), գումատներ, ամինաթթուներ (ասպիրին, գլյուտամին, վալին, մետիոնին, լիզին և այլն), վիտամիններ, բնական ֆիտոհորմոններ, մակրո (NKP) և միկրոտարրեր (երկաթ, պղինձ, կալցիում, ցինկ, մանգան, մագնեզիում), հողային միկրոօրգանիզմների սպորներ, մանրէասպան և սնկասպան նյութեր, բույսերի աճի և զարգացման խթանիչներ:

Արտաարմատային սնուցման ժամանակ բույսերը տերևային զանգվածի միջոցով իրացնում են այս բոլոր նյութերը, ինչի շնորհիվ բարձրանում է նրանց դիմադրողականությունը և կենսունակությունը: Սա պայմանավորված է պատրաստուկի բարձր բիոֆլորայով, կենսահումուսից փոխանցված հարուստ միկրոօրգանիզմներով (կենսահումուսի 1 սմ^3-ի մեջ պարունակվում են 100 մլրդ միկրոօրգանիզմներ, որոնց քանակությունը ևս հազարապատիկ ավելանում է՝ շնորհիվ այս տեխնոլոգիայի):

Միկրոօրգանիզմները, իրենց կենսագործունեության ընթացքում, արտադրում են հակաբիոտիկներ, ֆիտոհորմոններ, բակտերիասպան և սնկասպան միացություններ: Այս բոլոր նյութերը ոչնչացնում են վնասակար, հիվանդածին հողային միկրոֆլորան: Նրանք առողջացնում են հողը, ակտիվ կերպով պայքարում բույսերի մի շարք հիվանդությունների և վնասատուների դեմ, նպաստում բույսերի աճին ու զարգացմանը, բարձրացնում բերքատվությունը: Արդյունքում՝ բարձր կենսունակություն ունեցող բույսերի պտուղները դառնում են ավելի խոշոր, վիտամիններով, սննդարար նյութերով, ածխաջրածիններով հարուստ, ապրանքային և որակական բարձր հատկանիշներով: Հայտնի է նաև, որ ցանկացած աղքատ, որակական ցածր ցուցանիշներով հող իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ սննդարար տարրեր, սակայն դրանք հողում հանդես են գալիս կապակցված, չլուծվող ձևով, և բույսերը չեն կարողանում օգտվել դրանցից:

Նշված լուծույթը, թափանցելով բույսի արմատային համակարգ, գործի է անցնում և տարրալուծում անհասանելի համարվող հանքային տարրերը և ստեղծում բույսերի սնման հնարավորություն:

Պատրաստուկով մշակված բույսերն օժտվում են հետևյալ հատկություններով՝

- բարձրանում է սերմերի ծլունակությունը և ծլման էներգիան,
- կտրոնների արմատարձակումը դառնում է ավելի արագ,
- խթանվում է բույսերի արմատակալումը, աճը և արագ զարգացումը,
- մեծանում է բույսերի ֆոտոսինթեզը,
- բարձրանում է բույսերի դիմադրողականությունը և կենսունակությունը,
- փոքրանում է մթերքների մեջ նիտրատների, ծանր մետաղների, ռադիոնուկլիդների պարունակությունը,
- պտուղների և բանջարեղենի մեջ մեծանում է շաքարի, սպիտակուցների, վիտամինների պարունակությունը,
- բարելավվում է ապրանքային տեսքը և որակական հատկանիշները,
- բարձրանում է բերքատվությունը,
- բերքի հասունացման ընթացքն արագանում է 10-15 օրով,
- լուծույթով սնուցված բերքը լինում է էկոլոգիապես և բիոլոգիապես մաքուր:

Պատրաստուկով կարելի է կատարել ինչպես արտաարմատային, այնպես էլ՝ արմատային սնուցում: Պատրաստուկը համատեղելի է բուժման մյուս բոլոր պատրաստուկների հետ:

Բույսերի արտաարմատային սնուցումը

Արտաարմատային (տերևային) սնուցման ժամանակ, ի տարբերություն արմատային սնուցման, բույսերն արագ են վերականգնվում և դառնում կենսունակ, քանի որ այս դեպքում սննդարար նյութերը և լուծույթում գտնվող մյուս բոլոր բաղադրամասերը բույսի կողմից յուրացվում են ավելի արագ և լիարժեք:

Սրսկման աշխատանքները պետք է կատարվեն երեկոյան՝ արևամուտից հետո կամ վաղ առավոտյան՝ արևածագից առաջ, հակառակ դեպքում՝ բուժման արդյունավետությունը կընկնի՝ միկրոօրգանիզմների վնասվելու հետևանքով: Սրսկումները պետք է կատարվեն ցողի բացակայության դեպքում՝ մանրահատիկայնություն ապահովող սրսկիչի միջոցով: Եթե սրսկումից հետո, դեռ 5 ժամ չանցած՝ անձրև է եկել, ապա սրսկումները պետք է կրկնել:

Պատրաստուկի լուծույթով արտաարմատային սնուցումը նպատակահարմար է բոլոր բույսերի համար: Վարունգի, լոլիկի, պղպեղի, սմբուկի, դդմիկի սերմերի նախացանքային մշակումը կատարվում է պատրաստուկի 1:5 հարաբերակցությամբ ջրային լուծույթով՝ 18-20 ^{0}C ջերմաստիճանում՝ 24 ժամ տևողությամբ: Դրանից հետո չորացվում է ստվերի տակ՝ սենյակային ջերմաստիճանում: Մշակված սերմերն անհրաժեշտ է ցանել 24 ժամվա ընթացքում: Կարտոֆիլի պալարները ցանքից առաջ թրջում են պատրաստուկի 1:5 հարաբերակցությամբ լուծույթում՝ 8 ժամ տևողությամբ: Կարտոֆիլի մեծ քանակության դեպքում պալարներն անհրաժեշտ է փռել հարթ, ստվերոտ մակերեսի վրա և սրսկիչի միջոցով թրջել, այնուհետև՝ շրջել և նորից թրջել: Սա կարելի է կրկնել 2-3 անգամ, որից հետո պալարները հավաքում են և ծածկում պոլիէթիլենային թաղանթով՝ 24 ժամ

տևողությամբ: Մշակված չորացած պալարները սերմում են 5 օրվա ընթացքում:

Շուտ արմատակալման և արմատարձակման համար՝ կտրոնները, պտղատուների, խաղողի վազի, հատապտուղների տնկիները տնկելուց առաջ՝ 24 ժամ տևողությամբ, անհրաժեշտ է դնել պատրաստուկի՝ 1:5 հարաբերակցությամբ լուծույթում:

Առաջին արտաարմատային սնուցումը

Բանջարաբոստանային մշակաբույսերի համար կատարվում է 4-5 իսկական տերև փուլում՝ պատրաստուկի 1:5 հարաբերակցությամբ լուծույթով:

Պտղատուների, թփային ծառատեսակների, խաղողի վազի դեպքում կատարվում է ծաղկելուց հետո՝ 1:10 հարաբերակցությամբ:

Երկրորդ արտաարմատային սնուցումը

Լոլիկի, վարունգի, սմբուկի, տաքդեղի, կարտոֆիլի դեպքում սնուցումը կատարվում է ծաղկելուց առաջ, կաղամբի դեպքում՝ գլուխների ձևավորման փուլում, գազարի և ճակնդեղի դեպքում՝ արմատապտուղների ձևավորման փուլում՝ պատրաստուկի 1:5 հարաբերակցությամբ:

Պտղատուների, թփային պտղատեսակների, խաղողի վազի դեպքում կատարվում է պատրաստուկի 1:10 հարաբերակցությամբ: Հիվանդությունների դեպքում կարելի է ավելի հաճախակի կատարել նաև վաղ գարնանը՝ կեղևի վրա 1:5 հարաբերակցությամբ:

Հացահատիկային մշակաբույսերի սերմերի մշակումը կատարում են պատրաստուկի 1:5 հարաբերակցությամբ լուծույթով: Մշակումը կարելի է կատարել ախտահանիչներից որևէ մեկի հետ զուգակցված:

Վեգետացիայի ընթացքում կատարվում է հացահատիկային մշակաբույսերի 2 արտաարմատային սնուցում՝ պատրաստուկի 1:10 հարաբերակցությամբ լուծույթով, թփակալման և հասկակալման փուլերում:

Արփակ Խալաթյան
Վանիկ Ստեփանյան
Կոտայքի ԳԱՄԿ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԲՈՒՍԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻՑ ԿԱՐԵԼԻ Է ԲԻՈՎԱՌԵԼԻՔ ՍՏԱՆԱԼ

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի մոտ տեղի ունեցած խորհրդակցությանը քննարկվել են մարզում բուսական մնացորդներից բիովառելիք ստանալու հնարավորությունները:

Խորհրդակցությանը մասնակցում էին «Բարվա» ինովացիոն հետազոտական կենտրոնի տնօրեն, «Բիոգանգվածային էներգիա» նախագծի հեղինակ Արամ Վարդանյանը, մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արսեն Ղուկասյանը, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը և մեծ թվով համայնքապետեր:

Ներկայացնելով բուսական մնացորդներից բիովառելիք ստանալու հնարավորությունները՝ մարզպետը նշել է, որ բուսական ծագման ցանկացած բիոզանգված, այդ թվում՝ եղեգ, տերև, խոտ, մշակաբույսերի բուսական մնացորդներ, ծառերի ճյուղեր, մոլախոտային բուսականություն, փոքր-ինչ չորացնելուց հետո և հատուկ բրեկետավորման սարքի միջոցով սեղմվելու արդյունքում, դառնում է փայտից ավելի մեծ խտություն ունեցող վառելանյութ, որի այրման ժամանակ անջատվող ջերմությունը հավասար է քարածխին, էկոլոգիապես ավելի մաքուր է և այրումից հետո մնացորդները կարելի է օգտագործել որպես պարարտանյութ:

Մարզպետն առաջարկել է համայնքապետերին՝ բուսական թափոններից պինդ վառելիքային պելետների արտադրության կազմակերպման գործընթացի վերաբերյալ մանրամասները հասանելի դարձնել գյուղացիների շրջանում, նաև կազմակերպել բուսական մնացորդների խմբավորման և մշակության հանձնելու գործընթացը, որը գյուղացուն կբերի հավելյալ ֆինանսական միջոցներ և հնարավորություն կտա հոգալու ընթա-

ցիկ խնդիրները:

«Բարվա» ինովացիոն հետազոտական կենտրոնի տնօրեն, «Բիոզանգվածային էներգիա» նախագծի հեղինակ Արամ Վարդանյանն ասել է, որ բիոզանգվածից ստացվող էկոլոգիապես մաքուր գազը կարող է անհամեմատ մատչելի գներով հոգալ բոլոր էներգետիկ կարիքները: Ըստ նրա՝ 1 կգ պելետի այրման արդյունքում ստացվում է 5 ԿՎտ/ժ ջերմային էներգիա, որը 2-3 անգամ մատչելի է էներգիայի այլ աղբյուրներից: Նա տեղեկացրել է, որ ընկերության կողմից ստեղծվել են բիոհումքի մշակման անհրաժեշտ սարքավորումները, որոնք հասանելի են բոլոր ցանկացողներին՝ տեղում արտադրություն կազմակերպելու համար: Արամ Վարդանյանը նշել է, որ ընկերությունը, համապատասխան գումարով, պատրաստ է գյուղացուց գնելու անսահմանափակ քանակությամբ բուսական մնացորդներ՝ վառելիքային պելետների արտադրության կազմակերպման նպատակով: Համայնքապետերն էլ, իրենց հերթին, պատրաստակամություն են հայտնել աջակցելու և մասնակցություն ունենալու նախագծի իրագործմանը:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՈՉԽԱՐՆԵՐԻ ԾՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԳԱՌՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ

Ոչխարաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիան սերտորեն կապված է բնակլիմայական և կերարտադրության պայմաններից, իսկ ոչխարների զուգավորումն ու ծինը հարմարեցվում են մթերքների արտադրության արոտային շրջանին:

Լեռնային և նախալեռնային գոտիներում ոչխարաբուծությամբ զբաղվող տնտեսությունների համար ոչխարների ծնի նախընտրելի ժամկետը փետրվար-մարտ ամիսներն են: Առավել վաղ ծնի դեպքում, որոշ չափով ավելանում է կերի ծախսը, ապրանքային կաթը քիչ է ստացվում, սակայն, դրա փոխարեն, գառներն արոտի են դուրս գալիս ավելի մեծ կենդանի զանգվածով, լավ են աճում և մսի համար կարող են իրացվել ավելի վաղ շրջանում:

Ուշ ծնի դեպքում /մարտ- ապրիլ/, արոտային շրջանի սկզբում, գառները դեռևս փոքր են և վատ են յուրացնում կանաչը: Բացի դրանից, ուշ ծնած մաքիների լակտացիան համեմատաբար կարճ է տևում: Լավ զարգացած, կենսունակ գառներ ստանալու նախապայմաններից մեկը՝ հղի մաքիներին անհրաժեշտ սննդանյութերով կերակրելն է: Հղիության առաջին կեսում /մոտ 3 ամիս/ աճում են պտղակրության օրգանները: Եթե այդ շրջանում սնման մակարդակը կտրուկ նվազում է, ապա ճնշվում է ընկերքի աճը, վատանում պտղին սննդանյութերով մատակարարումը:

Այս շրջանում մաքիների օրական կերաբաժնի սննդատարությունը պետք է կազմի 1.0-1.2 կերի միավոր՝ 80-90 գրամ մարսելի պրոտեինի պարունակությամբ: Դրա համար անհրաժեշտ է տալ մոտ 1.8- 2 կգ լավորակ խոտ: Հղիության երկրորդ շրջանում պտղի զանգվածի աճի մոտ 60-70%-ը համընկնում է հղիության վերջին 6 շաբաթներին: Հետևաբար հղիության 4-րդ ամսից մոր օրական կերաբաժնի սննդատարությունը պետք է ավելացնել 25-30%, իսկ պրոտեինի, կալցիումի և ֆոսֆորի քանակը՝ 40-50%-ով: Մաքուն օրական պետք է տրվի 1.1-1.2 կերի միավոր՝ 110-120 գրամ մարսելի պրոտեինի պարունակությամբ: Դա կարելի է ապահովել, երբ տրվում է մոտ 2 կգ խոտ և 0.2 կգ խտացրած կեր: Հղիության վերջում կերաբաժնի սննդատարության ավելացումը պետք է կատարել ի հաշիվ խտացրած կերերի: Հղիության ընթացքում, հյութալի կերերի առկայության դեպքում, խոտի մի մասը կարելի է փոխարինել դրանցով: Խորհուրդ չի տրվում հղիության վերջում առաջնածին շիշակներին կերակրել առատորեն, քանի որ խոշոր պտուղը կարող է դժվար ծննդաբերության պատճառ դառնալ: Հղիության ընթացքում մաքիների կերակրումով է պայմանավորված ոչ միայն պտղի բնականոն աճը, այլև՝ դրանց կաթնատվությունը: Ցանկալի է ծնից մի քանի օր առաջ մաքիներին կերակրել ըստ պահանջի՝ լավորակ խոտով: Ոչխարների ծինն իրականացնելու համար գոմի միջանցիկ քամիներից պաշտպանված մասում պատրաստում են ծնարան, մաքրում, ախտահանում, ծղոտ փռում: Ծնարանը պետք է լինի չոր, տաք /8-10^{0}C/, ջերմաստիճանի մեծ տատանումներ ցանկալի չեն: Հայտնի է, որ մրսելուց և վատ կերակրումից գառների անկումներն ավելի շատ են, քան՝ վարակիչ հիվանդություններից: Ծնից անմիջապես հետո թողնում են, որ մայրը լիզելով չորացնի գառանը: Դա նպաստում է նաև ընկերքի շուտ ընկնելուն: Եթե 5-6 ժամվա ընթացքում ընկերքը չի ընկնում, անհրաժեշտ է դիմել անասնաբույժին /սովորաբար այն ընկնում է մոտ 2 ժամվա ընթացքում/: Եթե մաքին գառանը չի լիզում, անհրաժեշտ է սրբիչով կամ ծղոտով գառան բերանն ու քիթը մաքրել լորձից, շփել և դնել մոր առջև, որպեսզի լիզի: Նորմալ ծինը տևում է մոտ 30 րոպե: Այդ ընթացքում միջամտելու կարիք չկա: Միջամտում են, եթե գառը շատ խոշոր է կամ դիրքը ճիշտ չէ, երբ ծինը շատ է երկարում, և գնում են պտղաջրերը: Դժվար ծնից հետո մաքուն պետք է հակաբիոտիկ սրսկել: Ծնից հետո մաքին խիստ ծարավում է, ուստի հարկ է տալ գոլ ջուր: Նորածին գառան պորտալարը, եթե երկար է, ապա պետք է կտրել մոտ 8 սմ երկարությամբ և ախտահանել յոդի լուծույթով, ծնից մոտ կես ժամ հետո կերակրել խիժով: Եթե գառը ինքնուրույն կերպով մորը չի ծծում, անհրաժեշտ է օգնել, որպեսզի գտնի մոր պտուկը: Որքան շուտ գառը խիժ ուտի, այնքան լավ: Այն գառները, որոնք խիժ չեն կերել, ապրելու քիչ հավանականություն ունեն:

Ծնի առաջին օրերին ցանկալի է մաքուն կերակրել լավորակ խոտով, իսկ խտացրած կերեր կարելի է տալ, եթե կաթը քիչ է: Գառները, շատ կաթ ընդունելով, կարող են լուծ ընկնել: Առաջին 7-10 օրը նորածին գառանը պահում են մոր հետ: Մեկ մաքու հաշվով, վանդակի մակերեսը պետք է լինի 1.5- 2.0 մ^2: Զույգ ծնած մաքիներին պահում են առանձին: Վանդակներում պետք է լինեն ջուր և քարաղ: Գառներին 7- 10 օր հետո առանձնացնում են մաքիներից և կերակրում ամեն օր, սկզբում՝ 3- 4, ապա՝ 2 անգամ: Եթե գառն անընդհատ ջանում է կաթ ուտել, նշանակում է՝ չի կշտացել, և եթե մորը լրացուցիչ խտացրած կեր տալուց հետո էլ կաթը չի բավարարում, գառանը պետք է վարժեցնել ծծել ուրիշ կաթնառատ մաքու: Եթե դա հնարավոր չէ, կարելի է գառանը կերակրել ծծակով՝ տալով ոչխարի կամ կովի կաթ:

Սովորաբար, զույգ ծնված գառներից յուրաքանչյուրը ծծում է իր պտուկը: Իսկ եթե գառներից մեկն անկել է, պետք է հետևել, որ կրծի այդ քառորդում կաթ չմնա կամ այն մյուս գառը ծծի, կամ էլ՝ կթել: Առաջին երեք շաբաթում գառները սնվում են բացառապես մոր կաթով: Այդ շրջանում դրանց աճը պայմանավորված է մոր կաթնատվությամբ: Գառի մեկ կիլոգրամ քաշաճի համար այդ շրջանում ծախսվում է մոտ 5-5.5 կգ կաթ: Գառների նորմալ աճի համար մոր օրական կաթնատվությունը պետք է լինի 1.2-1.5 կգ: Դրա համար մաքու օրական կերաբաժնի սննդատարությունը, մեկ գառի դեպքում, պետք է լինի 1.4-1.5, զույգ գառի դեպքում՝ 1.8-2 կերի միավոր, մեկ կերի միավորի հաշվով՝ 100-110 գրամ մարսելի պրոտեինի պարունակությամբ: Գառներին վարժեցնում են 15-20 օրական հասակից խոտ և խտացրած կերեր ուտել: Խտացրած կերերը սկսում են տալ 30-50 գրամից՝ 1.0-1.5 ամսական հասակում հասցնելով օրական 100-150 գրամի: Խտացրած կերերի կազմում հացազգի հատիկները /եգիպտացորեն, գարի, վարսակ և այլն/ կարող են կազմել 75-80 տոկոս, մնացածը՝ պրոտեինով հարուստ կերերն են: Հասակին զուգընթաց, խտացրած կերերի քանակը կարելի է ավելացնել՝ 3-4 ամսականում հասցնելով 250-300 գրամի: Դա հնարավորություն կտա մինչև մորից առանձնացնելը /4ամսական հասակը/, գառների միջին օրական քաշաճը պահպանել 200-250 գրամի սահմաններում: Երբեմն, մաքիների կերաբաժնում սննդանյութերի, հանքային նյութերի և վիտամինների անբավարար քանակի դեպքում, նկատվում է ախորժակի այլասերում. մաքիները լիզում են մեկ մեկու, կրծում պատերը, հատակը, ուտում բուրդ և անկում, որը 1-3 ամսական գառների մոտ հիմնականում հետևանք է կալցիումի, ֆոսֆորի, յոդի և այլ հանքային նյութերի, վիտամին D-ի պակասության: Դրանից խուսափելու համար պետք է վերանայել կերաբաժինը, տալ սպիտակուցավիտամինային, հանքային լրացումներ՝ կավիճ, ոսկրալյուր, յոդ և այլն: Կանխարգելիչ միջոցառում է մորից առանձին պահելը, բաց օդում զբոսանքը, յոդի ջրային լուծույթ /5 կաթիլ յոդը՝ 30-40 մլ ջրով/ տալը և այլն: Սովորաբար, արոտային շրջանի սկզբից մաքիներին կթում են: Կթից հետո գառներին թողնում են մայրերին ծծելու: Գառներին կարելի է արոտի հանել 1.5-2 ամսական հասակից: Արոտի են հանում ուշ ժամերի՝ ցողը անցնելուց հետո: Եթե մաքիներին կթում են կեսօրին, ապա գառներին պետք է ավելի շուտ թողնել մայրերին ծծելու: Խտացրած կերեր տալիս են երեկոյան, արոտից բերելուց հետո: Մինչև խտացրած կերեր տալը, անհրաժեշտ է գառներին ջրել, օրվա ընթացքում՝ 2-3 անգամ: Չի կարելի գառներին ջրել անշարժ ջրափոսերից, լճակներից, ճահիճներից, այլ միայն՝ հոսող ջրերով: Գառներին տրվող հատիկային կերերը պետք է լինեն խոշոր ջարդված կամ ճզմած վիճակում: Չի կարելի դրանք մանրել՝ հասցնելով ալյուրի: Գառների կտրիչում բուսական կերերը խմորող և տրոհող միկրոֆլորան 2.5-3 ամսական հասակից գործում է ինչպես մեծահասակ ոչխարներինը: Այդ հասակից գառները կարող են նորմալ մարսել բոլոր բուսական կերերը: Վաղ հասակից դրանց խոտով կերակրելը խթանում է կտրիչի զարգացումը, և որոճն ավելի շուտ կարող է սկսվել: Գառներին մորից լրիվ առանձնացնում են 3.5-4 ամսական հասակում: Գառների աճը վերահսկվում է դրանց քաշաճով, որը, մինչև մայրերից առանձնացումը, միջին հաշվով, կարող է կազմել 180-200 գրամ:

Գառների կերակրումը

Յուրի Մարմարյան
ՀԱԱՀ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ ԵՆ

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը հանդիպեց մարզի վերամշակող ընկերությունների պատասխանատուների հետ՝ ոլորտում առկա ընթացիկ խնդիրները քննարկելու, դրանց լուծման համար հնարավոր ուղիներ գտնելու, ինչպես նաև վերջիններիս կողմից այս տարվա համար մթերվող պտուղ-բանջարեղենի նախնական ծավալները պարզելու նպատակով: Խորհրդակցությանը մասնակցում էին նաև փոխմարզպետ Դավիթ Սամսոնյանը, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը:

«Գյուղմթերքների արտադրությունը, դրանց իրացումը մեր մարզային տնտեսության զարգացման կարևորագույն ճյուղերից մեկն է, որտեղ առկա են բազում խնդիրներ, որոնք միասնական լուծում են պահանջում»,- իր խոսքում ընդգծեց մարզպետ Աշոտ Ղահրամանյանը՝ կոչ անելով ներկաներին միավորել ջանքերը և համատեղ աշխատանքներ իրականացնել: Նա կարևորեց պայմանագրային հիմունքներով գյուղացիական տնտեսությունների հետ աշխատելու հանգամանքը և այն, որ գյուղացին նախօրոք մթերող կազմակերպություններից տեղեկանա, թե ինչ քանակությամբ և ինչ պտուղ-բանջարեղեն արտադրի, որպեսզի կարողանա առանց խոչընդոտների կազմակերպել իրացման գործընթացը:

Մարզպետը ներկայացրեց նաև գյուղմթերքի և համապատասխան արտադրանքի արտահանման խթանմանն ուղղված մարզպետարանի ծրագրերը՝ պատրաստակամություն հայտնելով հնարավորության սահմաններում անել առավելագույնը՝ գյուղացու հոգսը թեթևացնելու և վերամշակող ընկերությունների համար արտադրանքի իրացման նոր շուկաներ գտնելու համար:

Վերամշակող ընկերությունների պատասխանատուները շնորհակալություն հայտնեցին հանդիպման կազմակերպման համար՝ միաժամանակ ներկայացնելով իրենց հիմնական խնդիրները, առաջընթացի հեռանկարները՝ դրանց լուծումն ու իրականացումը պայմանավորելով պետական աջակցությամբ և ճիշտ մասնագիտական մոտեցմամբ:

ԱԳՐՈ Լրատու
Փետրվար 5 - 16, 2016 թ.
թիվ 2 (2090)

ԾՐԱԳԻՐ

ԿԽԹԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Հայաստանում օրգանական գյուղատնտեսության խթանման նպատակով, դեռևս 2015 թվականի սեպտեմբերից, մեկնարկել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ) դրամաշնորհային եռամյա ծրագիրը, որը համաֆինանսավորվում և իրականացվում է Ավստրիայի զարգացման գործակալության (ԱԶԳ) կողմից:

Վերջերս ծրագրի հետ կապված տեղեկատվական հանդիպում և հայտամրցույթի ուղեցույցի վերաբերյալ դասընթաց անցկացվեց Տավուշի մարզպետարանում, որին մասնակցում էին մարզի գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուներ, ֆերմերներ, ֆերմերային տնտեսությունների, հասարակական կառույցների ներկայացուցիչներ, ովքեր զբաղվում են գյուղատնտեսական գործունեությամբ: ՕԳԱՆ ծրագիրը ներկայացրեց ծրագրի ղեկավար Քրիստինե Գրիգորյանը: Ներկայացվեցին ծրագրի նպատակները, բաղադրիչներն ու դրամաշնորհները:

Ծրագրի հատուկ նպատակներն են՝ Հայաստանում օրգանական արտադրանքի հավելյալ արժեքորումն ու համապատասխան պետական և մասնավոր սեկտորի հաստատությունների արդյունավետության բարձրացումը, բաղադրիչները՝ իրավական դաշտի բարելավումը, ֆինանսական աջակցության տրամադրումը և մարքետինգային գործունեության բարելավումը: Հատուկ ուշադրություն կդարձվի կին ֆերմերների, ֆերմերային խմբերի, կոոպերատիվների, վերամշակողների, ինչպես նաև երիտասարդներին և այլ խոցելի խմբերի գործունեությունը:

Փոքրածավալ դրամաշնորհներ կտրամադրվեն ֆերմերներին, ովքեր փորձում են նախաձեռնել, դիվերսիֆիկացնել կամ ընդլայնել օրգանական արտադրությունը: Իսկ մեծածավալ դրամաշնորհներ կտրամադրվեն արդեն իսկ օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերներին, կոոպերատիվներին և վերամշակողներին՝ արտադրողականության բարձրացման և շուկա մուտք գործելու հնարավորության ընդլայնման համար:

«Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության հասարակական կազմակերպության նախագահ Նունե Սարուխանյանը խոսելով օրգանական գյուղատնտեսության մասին՝ նշել է, որ Տավուշի մարզը պոտենցիալ հնարավորություններ ունի օրգանական գյուղատնտեսության զարգացման համար:

Այնուհետև դասընթացի մասնակիցներին ներկայացվեց հայտադիմումների պատրաստման ու ներկայացման կարգը՝ նշելով, որ դիմումների ներկայացման վերջնաժամկետ է նշանակված 2016 թվականի մարտի 21-ը: Միջոցառման վերջում դասընթացավարները պատասխանեցին ներկաներին հետաքրքրող հարցերին:

«Կանաչ արահետ» ՀԿ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լոռու մարզպետի հանձնարարությամբ, մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի նախաձեռնությամբ և Սպիտակի ՁՏԿ-ի, Լոռու ԳԱՄԿ-ի աջակցությամբ, վերջերս Լոռու ԳԱՄԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» և «Վճարովի հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրերի վերաբերյալ թեմատիկ սեմինար խորհրդակցություն: Մասնակցում էին մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի պետ՝ Վ. Ջաղինյանը, Սպիտակի ՁՏԿ-ի տնօրեն Ս. Խոյեցյանը, Լոռու ԳԱՄԿ-ի տնօրեն Մ. Գրիգորյանը, Սպիտակի տարածաշրջանի համայնքների ղեկավարներ, ՁՏԿ-ի և ԳԱՄԿ-ի աշխատակիցներ:

Բացման խոսքում Վ. Ջաղինյանը նշեց, որ մարզպետի հանձնարարությամբ նման թեմատիկ սեմինար խորհրդակցություններ պետք է անցկացվեն մարզի բոլոր տարածաշրջաններում: Վ. Ջաղինյանը հորդորեց համայնքների ղեկավարներին՝ ծանոթանալ ծրագրերի կարգին, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից, և ներկայացնել շահառուների ցուցակները՝ պահպանելով ներկայացման ժամանակացույցը:

Ծրագրերի դրույթներին ավելի մանրամասն անդրադարձավ Սպիտակի ՁՏԿ-ի տնօրեն Ս. Խոյեցյանը և իր շնորհակալությունը հայտնեց ԳԱՄԿ-ի տնօրենին ու համայնքների ղեկավարներին՝ արդյունավետ համագործակցության և օժանդակության համար՝ հույս հայտնելով, որ այն կլինի շարունակական, քանի որ ծրագիրը կնպաստի խոցելի և աղքատ գյուղական բնակավայրերի բնակչության սոցիալական լարվածության մեղմմանը, գյուղացիական տնտեսությունների աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը և, իհարկե, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը:

Գյուղատնտեսական աշխատանքների՝ նորմատիվների և մշակաբույսերի ցանկի վերաբերյալ հարցը ներկայացրեց ԳԱՄԿ-ի տնօրեն Մ. Գրիգորյանը: Ըստ ԳԱՄԿ-ի տնօրենի՝ կառավարության կողմից հաստատված այս ծրագիրը ևս նպատակ ունի ավելացնել ԳՏ-ների եկամուտները:

Կարինե Ադամյան
Լոռու ԳԱՄԿ

ՓՈՐՁ

ՍԵՐՄԵՐԻ ԾԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Անհրաժեշտ պարագաներ: 100 հատիկ սերմեր (ցորեն, լոլիկ, տաքդեղ, վարունգ), 200-250 մլ տարողության ջրի բաժակ, 0.3լ ջուր, ջուր կլանող՝ ծծան թուղթ (ֆիլտրի թուղթ)՝ 20X20 սմ և 20x4-5 սմ չափերի, պոլիէթիլենային թաղանթ՝ 25x20 սմ չափի և սովորական սև մատիտ:

Բովանդակություն: Սերմերի ծլունակության որոշումը կարևոր նշանակություն ունի նրանց ցանքի նորմաների ճշտման, սնման մակերեսների ընտրության և ընդհանրապես, ապագա բերքի մասին գաղափար կազմելու համար: Լաբորատոր կամ տան պայմաններում սերմերի ծլունակությունը որոշում են մի քանի եղանակներով՝ խոնավ շորի մեջ փաթաթելով, տորֆի մեջ ցանելով, բամբակի մեջ դնելով և այլն: Բայց այս մեթոդները բոլորն էլ պահանջում են մշտական հսկողություն և ուշադրություն դարձնել տորֆի, բամբակի կամ շորի կտորի մեջ եղած խոնավության վրա, որպեսզի սերմերը չչորանան:

Ահա, այդ թերությունները շտկելու համար առաջարկվում է նոր մեթոդ, որի դեպքում սերմերը միշտ գտնվում են ծլման համար բավարար խոնավության մեջ, և ծլման համար ջուրը մեկ անգամ լցնելուց հետո այլևս կարող ենք չանհանգստանալ ջրի պակասի համար:

Այս եղանակով հնարավոր է որոշել բանջարեղենների, հացազգիների մեծ մասի և որոշ այլ բուսատեսակների սերմերի ծլունակությունը: Կիրառությունը բավականին մատչելի է, չի պահանջում լրացուցիչ ծախսեր, նույնիսկ, հնարավոր է իրականացնել տան պայմաններում:

Կատարման տեխնիկան. Վերցնում ենք 25x20 սմ չափերի պոլիէթիլենային թաղանթ և տարածում սեղանի վրա: Հետո կտրում ենք ծծանի (ֆիլտրի) թղթից նույնչափ մի կտոր և նրա վրա վերին եզրից 1-1.5 սմ ներքև, սովորական մատիտով գծում ուղիղ հորիզոնական գիծ: Այնուհետև, այդ թուղթը թրջելով բաժակի ջրի մեջ՝ տարածում ենք սեղանին փռված թաղանթի վրա այնպես, որ պոլիէթիլենային թաղանթի վերին շերտից 2 սմ ներքև լինի:

Հետո վերցնում ենք սերմերը և շարում փռված թղթի վրա նշված գծի երկարությամբ այնպես, որ սաղմը ուղղված լինի ներքև՝ սաղմնային արմատիկը ծլելուց հետո ներքև ուղղվելու համար: Հաշվում ենք սերմերը՝ հետագայում ծլունակության տոկոսը ճշտելու համար: Այնուհետև վերցնում ենք 20 սմ երկարության և 4-5 սմ լայնության արդեն կտրված ֆիլտրի թուղթը և թրջելով՝ փռում շարված սերմերի վրա այնպես, որ թուղթն ամբողջ երկարությամբ երկու կողմից հավասարաչափ ծածկի սերմերը: Փռված թղթի շերտը մատով թեթևակի սեղմում ենք սերմերի վրա երկու կողմից, որ թաց թուղթը կիպ կպչի սերմերին:

Ավարտելով գործընթացը՝ պոլիէթիլենային թաղանթի մի կողքից (աջ կամ ձախ) սկսում ենք փաթաթել գլանակի նման՝ համեմատաբար սեղմ: Փաթաթված գլանակը դնում ենք կեսից մի փոքր ավելի ջրով լցված 200-300 մլ-ոց բաժակի մեջ և տեղափոխում տաք, լուսավոր տեղ:

Կախված սենյակի ջերմաստիճանից և բուսատեսակից՝ տարբեր սերմեր ծլում են տարբեր ժամկետներում: Օրինակ՝ 20-22 աստիճան տաքության դեպքում, ցորենի սերմերը սկսում են ծլել 2-3 օր հետո: Սերմերի ծլունակությունը կարելի է գնահատել մի քանի օր անց, երբ բոլոր ծլունակ սերմերն արդեն ծլած կլինեն (օրինակ՝ ցորենի համար դա 5-6 օր է):

Սերմերի ծլունակության հաշվման մեթոդիկան: Սերմերի ծլունակությունն արտահայտվում է տոկոսներով: Տվյալ դեպքում՝ այն հաշվելու համար, ծլած սերմերի քանակը բաժանում ենք ֆիլտրի թղթի վրա ցանված սերմերի ընդհանուր քանակին և բազմապատկում 100-ով: Օրինակ՝ ցանել ենք 75 սերմ, որից ծլած սերմերի թիվը եղել է 69: Ուրեմն, ցանված սերմերի ծլունակությունը կլինի (69:75)x100=92%:

Գենիկ Մովսիսյան
կենս. գիտ. թեկնածու

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

ՍԿՍՎԵԼ Է ՄԵԾ ՊԱՀՔԸ

Եկեղեցական փոնացույցի համաձայն՝ տարին բաժանվում է փոնական և պահոց օրերի: Պահոց 158 օրերի մեծ մասը կարճատև պահքեր են՝ օրապահքեր (չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի մատնության և չարչարանքների) և շաբաթապահքեր, իսկ առավել ժողովրդականություն վայելող և ամենաերկարատև պահքը Մեծ կամ Քառասնորդական պահքն է, որն այս տարի սկսվում է փետրվարի 8-ից և, ներառելով նաև Ավագ Շաբաթը, կտևի մինչև մարտի 27-ը՝ Ս. Զատիկ:

Ինչ է պահքը: Առաջին իմաստով այն կամավոր ինքնազրկումն ու զսպվածությունն է սննդի նկատմամբ: Եկեղեցական ավանդության համաձայն՝ երեք տեսակի պահքեր գոյություն ունեն: Առաջինը սովորական պահքն է՝ կենդանական ծագում ունեցող սննդից (բացառությամբ՝ մեղրի) և ոգելից խմիչքներից հրաժարումը: Երկրորդը սրբապահքն է՝ հրաժարումը նաև բուսական ծագման, սակայն ճոխ ու համադամ ուտելիքներից՝ ընդհուպ մինչև սոսկ աղուհացով սնվելը (Մեծ պահքի շրջանը կոչվում է նաև Աղուհացի շրջան): Երրորդը ծոմն է՝ միառժամանակ ընդհանրապես հրաժարումը սննդից և անգամ ջրից: Իհարկե, կարելի է նկատի առնել պահքի օգտակարությունը նաև բժշկական տեսակետից, հատկապես Մեծի պահոց շրջանում, քանի որ գարնանամուտն առանց ճարպային, կենդանական սննդի անցկացնելը դրական ազդեցություն է ունենում օրգանիզմի վրա: Սակայն սխալ է այն մտայնությունը, թե պահքը սոսկ դիետա է՝ նիհարելու կամ որոշակի հիվանդություններից ձերբազատվելու համար: Պահքը չի սահմանափակվում միայն կենդանական սննդից հրաժարումով. այն առաջին հերթին հոգեկան ու բարոյական ամեն տեսակի ախտերից ու մոլություններից, մեղանչական մտքերից, խոսքերից ու գործերից մաքրվելն է, զղջմամբ ու ապաշխարությամբ աստվածահաճո և առաքինի կյանքին դառնալը: Պահոց շրջանում կարևոր է հոգևոր շնորհների ու հատկապես եղբայրասիրության մեջ զորանալը: Պահք պահելը չպետք է պատճառ դառնա պահեցողության մեջ տկարացող եղբայրակցին դատելու.«Ով ուտում է, թող չարհամարհի նրան, ով չի ուտում, իսկ ով չի ուտում, թող չդատի նրան, ով ուտում է»:

Ի տարբերություն այլ եկեղեցիների, որոնք պարզապես թվակարգում են Մեծ պահքի 7 կիրակիները՝ Հայաստանյաց Եկեղեցին սուրբգրային հիմք ունեցող յուրահատուկ անուններով ու խորհուրդներով է օժտել դրանք, որով նրանք կազմել են խորհրդանշական մի շղթա՝ արտացոլելով մարդու դրախտային կյանքի, պատվիրանազանցության ու անկման, աստվածորոնողության և աստվածային նախախնամությամբ փրկագործության ողջ ընթացքը: Պահքերի (բացառությամբ՝ օրապահքերի) նախորդ օրերը կոչվում են «բարեկենդան», իսկ Մեծ Պահքին նախորդում է Բուն Բարեկենդանը: Բարի կենդանություն, այսինքն՝ բարի, անհոգ և երջանիկ կյանք. այս իմաստն է ամփոփված «բարեկենդան» անվան մեջ, որն առավելագույնս արտահայտված ենք տեսնում Բուն Բարեկենդանի խորհրդում: Այն Մեծ Պահքի առաջին կիրակին է և պատկերում է մարդու դրախտային երանավետ կյանքը: Այս խորհուրդը երևում է անգամ սննդի օգտագործման մեջ, քանի որ Բուն Բարեկենդանը կենդանական և ճոխ ուտելիքներ գործածելու վերջին օրն է: Մեծ պահքի երկրորդ կիրակին կոչվում է Արտաքսման և խորհրդանշում է մարդու՝ դրախտից արտաքսվելը և Աստծո տեսությունից զրկվելը: Հենց դա է խորհրդանշում ողջ Մեծ Պահքի շրջանում եկեղեցիների վարագույրների փակ մնալը և Ս. Հաղորդությունից հավատացյալների անմասն մնալը: Երրորդ կիրակին կոչվում է Անառակի և մատնանշում է առ Աստված դառնալու և կորուսյալ դրախտը գտնելու կարեվորագույն նախապայմանը՝ ապաշխարանքը: Չորրորդ՝ Տնտեսի կիրակին, ուսուցանում է նյութական հարստության տնօրինման կերպի դերը հավիտենական փրկության կամ կորստյան մեջ: Հինգերորդ՝ Դատավորի կիրակին, պատգամում է հարատև աղոթքի անփոխարինելի նշանակությունը փրկության համար: Վերջին՝ Գալստյան կիրակին, ամփոփում է Քրիստոսի ինչպես Առաջին Գալստյան խորհուրդը, այնպես էլ՝ Երկրորդ գալստյան խոստումը: Մեծ Պահքին անմիջապես հաջորդող շաբաթը կոչվում է Ավագ Շաբաթ և ընդգրկում է Փրկչի երկրային կյանքի վերջին կարևորագույն իրողությունները՝ հաղթական մուտքը Երուսաղեմ (Ծաղկազարդ), Վերջին Ընթրիքը, Մատնությունը, Չարչարանքները, Խաչելությունը, Մահը, Թաղումը և ի վերջո՝ հրաշափառ Հարությունը՝ Ս. Զատիկը:

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ ԿԱՄ ՏՐՆԴԵԶ

«Գնամ անեմ բարություն, հոգիս գնա արքայություն». այսպես են շնորհավորել մարդիկ միմյանց տեսնելիս Տյառընդառաջին:

«Տյառնընդառաջը խորհրդանշում է 40 օրական Հիսուսին տաճար տանելը: Երբ Հիսուսին բերում են տաճար, դրա արևելյան կողմի դռները, որ նախկինում չէին բացվել, ուժեղ դղրդյունով բացվում են, և մարդիկ իրենց ճրագներով դուրս են գալիս տներից՝ տեսնելու ինչու է այդպիսի աղմուկ բարձրացել: Մարդիկ ակամայից իրենց ճրագներով լուսավորում են Հիսուսի ճանապարհը դեպի տաճար: Ահա սա է այսօր վառվող խարույկի հիմնական խորհուրդը: Իսկ այն, որ մարդիկ խարույկի վրայով ցատկում են՝ հավատալով, թե դա նրանց հաջողություն կբերի, սնոտիապաշտություն է: Տյառնընդառաջի ծիսական արարողակարգը սկսվում է փետրվարի 13-ին՝ երեկոյան ժամերգության ավարտին, երբ սկսվում է նախատոնակը: Երեկոյան և առավոտյան ժամերգությունների ընթացքում Ավետարանների ընթերցումները նվիրվում են քառասնօրյա Փրկչի Տաճար գալուն:

Եկեղեցու ատյանում արտասովոր լուսավորություն է տիրում: Հավատացյալները մասնակցում են աղոթքին՝ ձեռքներին մեկական մոմ: Այդ լույսը՝ որպես Քրիստոսի փրկության լույսի խորհրդանիշ, ժամերգության ավարտին տանում են և լուսավորում իրենց օջախները: Տյառնընդառաջի նախատոնակին եկեղեցում կատարվում է Անդաստանի կարգը՝ արտերի և այգիների օրհնությունը, որը ձմռան ավարտի և գարնանամուտի մունետիկն է:

Ժողովրդական շատ սովորույթներից պահպանվել է նաև տոնի օրը ճոխ սեղաններ բացելը: Տյառընդառաջ տոնն ազգային խոհանոցը պահպանելու միջոցներից մեկն է. կան հին հայկական կերակրատեսակներ, որոնք այս կամ այն չափով մոռացության էին մատնվել, այսօր արդեն դրանք վերականգնվել են, ներկայացվել հանրությանը: Տոնի ավանդական ուտեստները հիմնականում նաև մեր իրականության մեջ պահպանվել են: Նախկինում տրնդեզի սեղանին մատուցել են խաշիլ, փոխինձ, փուռիկներ՝ լցոնած չրերով, բանջարեղեններ, հալվա, աղանձ, հարիսա գաթա, խնձոր և այլն: Մեր նախնիներն օգտվել են հաշվարկված սննդի համակարգից՝ նկատի ունենալով բնակլիմայական պայմաններն ու դրանց ազդեցությունն օրգանիզմի վրա: Կերակրատեսակների մեծամասնությունը հիմնականում պահպանվել են գյուղական վայրերում:

Ընդունված է եղել պատրաստել նաև փոխինդե գնդիկներ, որը կոչվում է կլոնդրակ: Մատուցվել են նաև հալվայի տարբեր տեսակներ՝ մեղրով, շաքարով կամ դոշաբով, հացի տարատեսակներ, որոնք լցոնված են եղել չրերով, խոտաբույսերով, ընդեղենով և այլն:

Հիմնական ուտեստը աղանձն է, որի պատրաստման համար անհրաժեշտ է ցորեն, կանեփի սերմ, աղ, ընկույզ և նուշ:

Ցորենը բովում են ոչ շատ թեժ կրակով, մի քիչ աղաջուր են լցնում, անընդհատ խառնում: Առանձին բովում են կանեփի սերմը: Բովում են նաև ընկույզն ու նուշը, խառնում բոլորն իրար, լցնում մի ամանի մեջ և շորով փաթաթում: Տրնդեզի աղանձի հետ երբեմն խառնում են քաղցր կլոր կոնֆետներ և ադի-բուդի՝ եգիպտացորենի բոված հատիկներ: 1-2 օր առաջ աղանձ են պատրաստում, որի մի մասն աղում և փոխինձ են ստանում: Արարողակարգի համար ցախ, ծիսական ճյուղեր են հավաքում, պատրաստում են ժապավենները: Ցախը դրսում չեն թողնում, որպեսզի չխոնավանա: Ծիսակատարության օրը յոթ տեսակ ընդեղեն ու աղանդեր պիտի լինի:

Ճյուղերի վրա ժապավեններ են կապում՝ մտքում պահելով այն, ինչ ուզում են, որովհետև այրելով ժապավեն կապած ճյուղը՝ այրում են վատ բաները: ***«Թող հիվանդություն չլինի: Թող վախ չլինի...»:***

Լիլիթ Գասպարյան

ՍԿՍՎԵԼ Է 2016 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ
1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները
«Հայփոստ»,
«Հայմամուլ»,
«Պրես-Ստուդիա»
կազմակերպությունները

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել ***011 23 14 30*** հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ ***«Նոյան Տապան» և «Բուկինիստ»*** գրատներում:

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ.ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 4
ստորագրված է տպագրության 15.02.2016 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա